



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՆՈՅԵՄԲԵՐ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ պանոնք:
Տուր որ հասկնամ Օրէնքդ,
որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնապանդիմ անոր:
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս,
որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ:
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի,
Քան անձնական հարստութիւն դիպելու:
Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն,
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:
Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուր խոստումդ,
այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն:
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,
որովհետեւ վճիռներդ արդար են:
Միակ փափաքս է՝ հրահանգներդ կատարել.
Կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոշիւնի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

15 ԳԼՈՒԽ

ԴԱՏԱՎՃԻՌ ՅՈՒՂԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ (15:1-9)

Անցնող գլխու ասարտին փեսանք, թե ինչպես Երեմիա դարձեալ խնդրեց Աստուծմէ ողորմութիւն, խոստովանելով իր եւ ժողովուրդին մեղքը: Խնդրեց որ Աստուած Իր անուան համար, Իր ուխտին համար թող խնայէ ու ողորմի այս ժողովուրդին: Այս աղօթքին իբրեւ պարասխան, ոչ միայն Երեմիայի միջամտութիւնը, այլ եթէ նոյնիսկ Մովսէսն ու Սամուէլն ալ միջամտեն ընդունելի պիտի չըլլան. **«Եթէ Մովսէսն ու Սամուէլն ալ իմ առջեւ կայնէին, ժողովուրդին վրայ հաճութիւն պիտի չունենայի»** (1 հմր): Հերարքքրականօրէն, որովհետեւ թէ՛ Թուոց 14:20 եւ թէ՛ Ա Թագ 7:9, կը ներկայացուին Մովսէսն ու Սամուէլը իրենց միջամտութեամբ Աստուծմէ ներում խնդրելու իրենց ժողովուրդին համար, նոյնը կը կարդանք Սաղմոս 99:6-8: Ամենաձանր դարավճիռը **«Չանոնք առջեւս վնարէ ու թող դուրս ելլեն»** (1 հմր):

Իսկ եթէ հարցնեն «Ո՛ր ելլենք»: Տէրը այսպէս կ'ըսէ. **«Մահուան համար որոշուածները՝ մահուան: Սուրի համար որոշուածները՝ սուրի: Սովի համար որոշուածները՝ սովի: Գերութեան համար որոշուածները՝ գերութեան»** (2 հմր): Հերարքքրականօրէն այս հարուածը համեմատենք Յայտնութիւն 6:8ի հետ. **«Տեսայ դեղին ձի մը: Անոր վրայ հեծնողին անունը մահ էր եւ Դժոխքը անոր ետեւէն կ'երթար ու անոնց իշխանութիւն փրուեցաւ երկրին չորրորդ մասին վրայ, որ սրով, սովով եւ մահով ու երկրի գազաններով սարկեցնեն»**: Նախ առաջին հերթին Տէրը ցոյց կու փայ թէ ինչ պիտի պարահի, կոպորած, մահ ու անք եւ գերութիւն: Յոյց կու փայ, թէ բոլորը նոյն ձեւով չէ որ պիտի մահանան, այլ այնպէս ինչպէս Տէրը Ինք ցոյց կու փայ: Շարեր մահով, շարեր՝ սովով, շարեր՝ սուրով, իսկ ոմանք ալ գերի պիտի փարուին: Այս բոլորը, ոչ թէ Երեմիայի օրերուն կը փրուին իբրեւ պարգաւը, այլ՝ Մովսէսի օրերէն. **«Եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին չհնազանդիս ու չպահես ու չընես անոր բոլոր պարտիրաններն ու կանոնները, այն արեն հետեւեալ անէքները քու վրադ պիտի հասնին: Տէրը քու թշնամիներդ առջեւ քեզ ջարդել պիտի փայ. անոնց դէմ մէկ ճամբով պիտի ելլես եւ երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ թափառական պիտի ըլլաս: Բու մարմինդ երկինքի բոլոր թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլայ»** (Բ Օրինաց 28:25-26):

Այս բոլորը Մանասէին պարճառով: Ինչո՞ւ միայն Մանասէն: Որովհետեւ Մանասէն էր որ ոչ միայն կռապաշտութիւնը քաջալերեց, այլ նոյնիսկ Աստուծոյ փաճարը պղծեց այնպէս որ հեթանոսական արձաններ կանգնեցնելով: Եւ յաջորդով քանի մը թագաւորներ իրենք ալ հետեւեցան անոր ըրածներուն:

Արդեօք «ո՛վ քեզ պիտի խնայէ, ո՛վ ցաւակից պիտի ըլլայ, կամ ո՛վ այցի պիտի գայ, ով Երուսաղէմ» (5 հմր): Ոչ որ:

Քանի-քանի անգամներ Տէրը ողորմեցաւ: Շարեր բարեխօսեցին, Տէրը խնայեց: Բայց ալ հասած է ժամանակը: Այսօր ալ նոյն է պարագան: Տէրը կը համբերէ, կը սպասէ, որուն համար ալ Պեպրոս Առաքեալ կ'ըսէ. **«Աստուծոյ համբերապարտութիւնը փրկութիւնը համարեցէք ձեզի»** (2 Պեպր 3:15), բայց կայ նաեւ այդ բոլորին ասարտը, որ Աստուծոյ բարկութեան բաժակը պիտի յորդի: Որովհետեւ Տէրը կ'ըսէ. **«Դուն զիս թողուցիր, ես ալ իմ ձեռքս քու վրադ պիտի երկնցնեմ եւ քեզ պիտի կորսնցնեմ, որովհետեւ քեզ գթալէն ձանձրացայ»** (6 հմր): Արդեօք Աստուած կը ձանձրանա՞յ: Ըսել կ'ուզէ ալ հասած է ժամանակը:

Որովհետեւ անոնք իրենց ճամբաներէն, այսինքն՝ իրենց սխալ ապրելակերպէն, չդարձան, անոր համար ալ իմ ժողովուրդս անգաւակ պիտի մնայ, անոր որբեայրիները պիտի շարնան: Եօթը գաւակ ունեցող մայրը, այսինքն՝ Երուսաղէմը պիտի նուաղի: Կէսօրուան արեն արելը պիտի մար մընէ (8-9 հմր): Ինչպիսի ահաւոր վիճակ է որ կը սպասուի այս ժողովուրդին:

ԵՐԵՄԻԱ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ (15:10-21)

Երեմիա կը գանգալի Ասպուծոյ, որովհետեւ ամէնքը զինք կ'անիծեն (10 հմր): Ինչո՞ւ: Որովհետեւ այս բոլոր ճշմարտութիւնները, պարգամները ինք պիտի փոխանցէ այս ժողովուրդին, մանաւանդ՝ գալիք կոտորածներն ու արհաւիրքները: Բայց Տէրը կը վստահեցնէ, «**որ զինք պիտի ազարէ, ու երջանիկ պիտի ըլլայ: Նեղութեան ու տառապանքի ժամանակ թշնամիիդ քեզի աղաչել պիտի փամ**» (11 հմր): Այսպէս ալ կ'ըլլայ (Երեմ 39:11):

Ասպուծ խօսքը կ'ուղղէ մարգարէն ժողովուրդին, «**մեղքերուդ համար՝ բոլոր սահմաններուդ մէջ քու սրացուածքդ ու զանձերդ յափշտակութեան պիտի փամ: Անձանօթ երկրին մէջ թշնամիներուդ ծառայ պիտի ընեն**» (13-14 հմր):

Մէկ անգամ եւս մարգարէն աղերսանքով կը դիմէ Ասպուծոյ, որ Տէրը լաւ իր վիճակը, կրած նեղութիւնները թշնամիներէն, եւ այս բոլորը Ասպուծոյ սիրոյն յանձն առած: Մանաւանդ՝ երբ Ասպուծոյ խօսքը գրած, անմիջապէս կերաւ, որ կը նշանակէ անոր վրայ մտածել, անով առաջնորդուիլ, եւ այդ խօսքը, թէ՛ եւ դառնութեան բաժին ունի, բայց նաեւ ցնծութիւն եւ ուրախութիւն կու փայլ գայն ճաշակողին (16 հմր), որովհետեւ նաեւ քու անունովդ կոչուեցայ՝ մարգարէ:

Ահա այդ իսկ պարճառով, մարգարէն կու գայ ըսելու, թէ. «Ծաղր ընողներուն նստած տեղը չնստեցայ ու չգուարճացայ. Ասպուծոյ ձեռքը իր վրան ըլլալուն համար առանձին մնաց, ու մանաւանդ՝ Ասպուծոյ բարկութիւնովը լեցուած էր» (17 հմր), որ կը նշանակէ, փոխանցելիք պարգամները Ասպուծոյ բարկութիւնն են Իսրայէլի ժողովուրդին: Այնպէս կը թուի թէ մարգարէին ցաւը մշտնջենաւոր է, անբուժելի: Որովհետեւ միայն կոտորածի, հարուածի, սպաննութեան պարգամներ են կարծէք, որ Ասպուծ կու փայլ մարգարէին, որպէսզի ան ալ փոխանցէ ժողովուրդին (18 հմր): Բայց այդպէս չէ: Ահա Ասպուծոյ պարասխանը Երեմիային. «**Եթէ դառնաս՝ եւ քեզ պիտի վերականգնեն: Եթէ պարտականը անարգէն զարես: Քեզ ամուր պղինձի պէս պիտի ընեն: Քեզի հետ պիտի պարերագմին, բայց չկարենան քեզի յաղթել, որովհետեւ եւ քեզի հետ են, քեզ փրկելու եւ ազարելու համար: Քեզ չարերուն ձեռքէն պիտի ազարես ու փրկես**» (19-21 հմր): Այս փրուած խոստումին համաձայն Տէրը պիտի խնայէ մարգարէին հմմտ (Երեմ 40:1-6):